

Հաշվետվություն

Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության
վեցերորդ բաժնի փորձագետ Էլզա Իսախանյանի կողմից 2024 թվականի
նոյեմբերի 12-ից մինչև 2025 թվականի մայիսի 12-ը կատարած աշխատանքի
վերաբերյալ

Ես՝ Էլզա Իսախանյանս, 2024 թվականի նոյեմբերի 12-ից մինչև 2025 թվականի մայիսի 12-ը, որպես փորձագետ իրականացրել եմ հետևյալ գործառույթները.

- Հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների և Արդարադատության նախարարության կողմից Օրենքով սահմանված այլ գործունեության ոլորտների վերաբերյալ տրամադրել եմ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Պատասխանել եմ ընդունարանում գործող տեղեկատու հեռախոսահամարի զանգերին:
- Իրականացրել եմ արդարադատության նախարարությանը հասցեագրված բոլոր գրությունների ընդունման, կնքման և փաստաթղթաշրջանառության ապահովման վարչությանը հանձնման աշխատանքներ:
- Վարչության քաղաքացիական ծառայողներին ցուցաբերել եմ կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն:

07.05.2025թ